**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**«09» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԿՆՔՎԱԾ**
**N «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/43»**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ք. Երևան** **«09» «դեկտեմբերի » 2019թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ստեփան Մաչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աութսորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Սարգսյանի, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 31.10.2019թ. N 1517-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «09» դեկտեմբերի 2019 թ. N «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/43» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

***1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ***

1.1 Պայմանագրի 4.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3550000 (երեք միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: 2019թ. համար սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների գինը կազմում է 1863750 (մեկ միլիոն ութ հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

***2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ***

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

***3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ***

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածները կազմված են յոթ էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| --- | --- |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,<br>ք. Երևան, Կառավարական տուն 3,<br>ՀՎՀՀ՝ 02536701<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ՝ 900011024990<br>Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող<br>Ս. Մաչյան<br>-----------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | «Աութսորս» ՍՊԸ<br>ք. Երևան, Սարմենի 1, 2/1<br>ՀՎՀՀ՝ 02639627<br>«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 163007079839<br>Գլխավոր տնօրեն<br>Ա. Սարգսյան<br>-----------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված N 2*
*« 09 » դեկտեմբերի 2019 թ. կնքված*
*N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/43 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 80531100/620 | Արդյունաբերական ուսուցման ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1863750 | 1863750 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՎՀՀ՝ 02536701
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011024990
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
Ա. Մաչյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Աութսորս» ՍՊԸ
ք. Երևան, Սարմենի 1, 2/1
ՀՎՀՀ՝ 02639627
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007079839
Գլխավոր տնօրեն
Ա. Սարգսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ